ՍՐ-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԿՈՐՅՈՒՆԻ

ՎԱՂ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ V ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

(պատմության և պատմականության ընբռնումը)

Է.00.05

Պատմագրություն, աղբյուրագիտություն
մասնագիտությամբ

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 1997

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ.Խ.ՍԱՐԳՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր
Է.Լ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա.Է.ԽԱՉԻԿՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝
Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ
/Մատենադարան/

Պաշտպանությունը կայանալու է 20 *"հոկտեմբերի" 1997թ. ժ.*14.00*-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Մարշալ Բաղրամյան պող., 24գ, 11 հարկ)*

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է "19" *սեպտեմբերի* 1997թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար. պատմական գիտությունների թեկնածու Ա.Վ.ՔՈՍՅԱՆ

ԹԵՄԱՅԻ ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Վաղ Բյուզանդական եկեղեցական և V դարի հայ պատմագրության փոխհարաբերության հիմնախնդիրը հայագիտության առավել հետաքրքրական ու հրատապ հիմնախնդիրներից մեկն է: Առանձնապես կարևոր նշանակություն ունի պատմական իրականության իմաստավորման մեթոդի ուսումնասիրումը: Հայտնի է, թե որքան մեծ է եղել բյուզանդական մշակույթի ազդեցությունը V դարում ձևավորվող հայկական ազգային մշակույթի վրա: Այս կապակցությամբ բավական է հիշել այն դերը, որ խաղացել է հունական գրի համակարգը ինքնատիպ հայկական այբուբենի ստեղծման գործում, ինչպես նաև Աստվածաշնչի ու եկեղեցու հայրերի բազմաթիվ երկերի հունարենից հայերեն թարգմանելու փաստը: Բյուզանդիայի հոգևոր ազդեցությունը համակողմանի էր և անդրադարձել էր հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բոլոր ոլորտների վրա: Բյուզանդական հողի վրա առաջացած եկեղեցական պատմագրության ինքնատիպ ավանդույթը բարենպաստ պայմաններ գտավ Հայաստանում իր տարածման համար: Այստեղ բավական է հիշել Կորյունի և Ագաթանգեղոսի՝ այդ ականավոր պատմիչ-վարքագիրների անունները: Սակայն քրիստոնեական պատմական մտածելակերպը բնավ գերիշխող չէր V դարի հայ դասական պատմագրության մեջ: Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի պատմական հետազոտության մեթոդները, պատմականության սկզբունքի նրանց ըմբռնումը աչքի են ընկնում վառ ինքնատիպությամբ, չունենալով ոչ անտիկ, ոչ էլ բյուզանդական եկեղեցական զուգահեռներ: Այս ինքնատիպության բնույթի և պատճառների ուսումնասիրումը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ միայն դա հնարավորություն կընձեռի լիովին գնահատելու հայ պատմիչների համաշխարհային պատմական մտքի զարգացման մեջ արված ավանդի նշանակությունը:

Չնայած սույն թեմայի կարևորությանը, կարելի է ասել, որ այն տակավին հատուկ ուսումնասիրման առարկա չի դարձել: Սկսած XIX դարից, երբ ձևավորվում էր ժամանակակից հայագիտությունը, հայ և այլազգի հետազոտողների ուշադրության կենտրոնում էին գտնվում այլ խնդիրներ, որոնք կապված էին, մեծ մասամբ, հայ միջնադարյան պատմիչների կյանքի տարիների ճշգրտման, պատմագրական հուշարձանների ստեղծման ճիշտ թվականի որոշման, պատմիչների կողմից

օգտագործված սկզբնաղբյուրների հայտնաբերման, պատմիչների վկայությունների արժանահավատության աստիճանի որոշման հետ և այլն:

Գրվել են այդ հարցերին նվիրված բազմաթիվ մեծարժեք աշխատություններ, որոնք պատկանում են այնպիսի ականավոր հայագետների գրչին, ինչպիսին են, Ն.Մառը, Մ.Աբեղյանը, Հ.Մանանդյանը, Ստ.Մալխասյանցը և ուրիշները: Սակայն դժվար չէ նկատել, որ այս աշխատություններում լուսաբանվող պրոբլեմները հիմնականում վերաբերվում են բանասիրության ոլորտին, մինչդեռ մեզ հետաքրքրող հիմնախնդիրը գիտության բոլորովին այլ բնագավառին է պատկանում, գլխավորապես առնչվելով պատմա-փիլիսոփայության պրոբլեմատիկայի հետ: Ցավոք սրտի, պատմականության սկզբունքի վաղ միջնադարյան ըմբռման հետ առնչվող հարցերը առայսօր հայագետների պատշաճ ուշադրությանը չեն արժանացել, և սույն աշխատությունը փաստորեն վաղ միջնադարի բյուզանդական եկեղեցական և V դարի հայ պատմագրության մեջ պատմականության սկզբունքի ըմբռնման համեմատական վերլուծությանը նվիրված առաջին մենագրական ուսումնասիրությունն է:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Նախ և առաջ, հետազոտության նպատակը «պատմականություն» տերմինի մեջ ներդրվող բովանդակության կոնկրետացումն է: Դա արվում է պատմականության սկզբունքի ներքին տրամաբանական կառուցվածքը կազմող հիմնական կատեգորիաների հայտնաբերման միջոցով: Այդ սկզբունքի ծագումն ու զարգացումը ուսումնասիրելու անհրաժեշտության պատճառով ատենախոսության մեջ տրվում է անտիկ պատմագրության ռահվիրաներ և դասականներ Հերոդոտոսի, Թուկիդիդեսի և Քսենոփոնի պատմականության ըմբռման առանձնահատկությունների բնութագիրը: Նման էքսկուրսի անհրաժեշտությունը պայմանավորված է այն վճռորոշ նշանակությամբ, որ ունեցել է անտիկ պատմական մտքի կողմից ստեղծված հասկացողական ապարատը ինչպես բյուզանդական, այնպես էլ հայկական միջնադարյան պատմագրության համար: Ուսումնասիրության հիմնական նպատակներից մեկը ցույց տալն է, թե ինչպիսի կերպափոխումների են ենթարկվել պատմականության սկզբունքի հիմքում ընկած կատեգորիաները պատմագրության անտիկ տիպից միջնադարյան տիպի անցնելու

ժամանակ, ընդորում առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում Բյուզանդիայում և Հայաստանում պատմականության ըմբռմանը ինչպես նմանությունների, այնպես էլ տարբերությունների վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Առաջարկվող աշխատության գիտական նորույթը որոշվում է նախ և առաջ, նրա մեջ ուսումնասիրվող հիմնախնդրի արդեն նշված անմշակվածությամբ: Բացի պրոբլեմատիկայի նորությունից, ատենախոսության մեջ նոր է նաև մոտեցումը համապատասխան պատմագրական նյութերի լուսաբանման և մեկնաբանման նկատմամբ: Այս աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում հիմաստավորելու V դարի հայ դասական պատմագրության մեթոդն ու ոճը, ելնելով այն ժամանակաշրջանի հայ հոգևոր մշակույթի ընդհանուր գաղափարախոսական համատեքստից: Առանձնապես մեծ ուշադրություն է դարձվում հայ ազգային մտածելակերպի բնորոշ անկրկնելի առանձնահատկությունների հայտնաբերման վրա: Ցույց է տրվում, թե ինչպես այդ յուրահատուկ մտածելակերպն ու աշխարհընկալման եղանակը արտահայտվում է հայ պատմիչների երկերում, և ինչով է պատմականության սկզբունքի նրանց ըմբռնումը տարբերվում բյուզանդականից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կոնկրետ պատմական մոտեցումն է հետազոտվող նյութի նկատմամբ: Դա նշանակում է, որ պատմագրական հուշարձանները ատենախոսության մեջ դիտվում են այն կոնկրետ պատմական, հասարակական և գաղափարախոսական համատեքստում, որում նրանք ստեղծվել են:

Աշխատության ժամանակագրական շրջանակներն են IV-V դարերը, երբ մի կողմից, ձևավորվում էր բուն բյուզանդական պատմագրական ավանդույթը, որ սերտորեն կապված էր Արևելյան Հռոմեական կայսրության պաշտոնական գաղափարախոսություն դարձած ուղղափառ քրիստոնեության հետ, իսկ մյուս կողմից՝ փայլուն ծաղկում ապրեց հայ դասական պատմագրությունը: Բյուզանդական հեղինակներից մեր քննության առարկան դարձան եկեղեցական պատմիչները՝ Եվսեբիոս Կեսարացին, Սոկրատ Սքոլաստիկոսը և Սոզոմենոսը: Հայ հեղինակներից ուսումնասիրվում են V դարի պատմիչները՝ Կորյունը,

Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Այս ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես հայ ժողովրդի պատմության վաղ միջնադարյան շրջանի, այնպես էլ հայ պատմագրության պատմության դասավանդման ժամանակ: Բացի այդ, այն կարող է ծառայել որպես խթան սույն հիմնախնդրի հետագա խորացված ուսումնասիրման համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատությունը քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա արևելքի բաժնում: Աշխատության առանձին դրույթները արտացոլում են ստացել հեղինակի հրապարակումներում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից և գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի կարևորությունը և այժմեականությունը, սահմանված է ուսումնասիրության նպատակն ու հիմնական խնդիրները, բացահայտված է բարձրացված հարցերի ուսումնասիրվածության աստիճանը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԱՏԵԳՈՐԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Առաջին գլխում, որ նվիրված է պատմականության սկզբունքի ներքին կառուցվածքին, նշվում է, որ պատմագիտության առաջացման գործընթացն անհնարին կլիներ առանց աշխարհի հին առասպելաբանական պատկերի քայքայման: Ընդորում նախորդ աշխարհայացքի բացասումը ուներ դիալեկտիկական բնույթ, այսինքն նոր մտածելակերպի մեջ վերափոխված ձևով պահպանվում էին հին մտածելակերպին բնորոշ բազմաթիվ պատկերացումներ: Ըստ այդմ կարելի է

եզրակացնել, որ այն ժամանակ ձևավորվող տրամաբանական գործիքակազմում, որից օգտվում էին բոլոր նորաստեղծ գիտությունները, կարող էր գոյանալ լոկ տարբեր հին առասպելույթների համապատասխան կերպափոխման և վերաիմաստավորման միջոցով: Այս կարգի կարևորագույն առասպելույթներից էր ճակատագիրը: Հին հունական աշխարհընկալման մեջ ճակատագիրն ըմբռնվում էր որպես բացարձակ տիեզերական անհրաժեշտություն, որին ենթարկվում էին ոչ միայն մարդիկ, այլև դիք: Ճակատագիրը սերտորեն կապված էր երկու այլ առասպելույթների՝ Քրոնոսի (ժամանակի) և Մոյրաների (բախտի) հետ:

Հին հույների առասպելաբանական մտածելակերպի տեսակետից ճակատագրի գաղափարը բխում էր ժամանակի գաղափարից: Պատմությունը Մոյրաների իշխանության ոլորտն էր համարվում: Սակայն տվյալ պատկերացումն անհամատեղելի էր պատմականության սկզբունքի հետ, քանի որ յուրաքանչյուր առասպել, արտաժամանակային բնույթ ունենալով ոչ այլ ինչ է, քան ենթակայացված, անձնավորված, և կոնկրետ կերպարանք ունեցող ընդհանուր մի հասկացություն, որին որևէ ժամանակային բնորոշումներ տալը անհետեթեթություն կլիներ: Անտիկ Քրոնոսը նույնպես սկզբունքորեն տարբերվում է ժամանակի գիտական կատեգորիայից, քանի որ առասպելական ժամանակը ներփակ է, շրջանաղարձ, և, ըստ էության, անշարժ, մինչդեռ ժամանակի գիտական ըմբռնումը անհնարին է առանց նրա գծայնությունից, միաուղղվածությունից և անշրջելիությունից: Պատմական գործընթացի այս առասպելաբանական ըմբռնումը առավել վառ դրսևորվում է գտել հոմերոսյան էպոսում:

Պատմագիտության ռահվիրաներ Հերոդոտոսն ու Թուկիդիդեսը անհրաժեշտաբար պիտի հրաժարվեին էպոսին բնորոշ պատմության առասպելաբանական ըմբռնումից, քանզի նրանք ցանկանում էին նկարագրել ոչ թե աստվածների, այլ մարդկանց արարքները: Սակայն ավանդական օլիմպոսյան կրոնի առասպելույթները նրանք ոչ թե դեն են նետել, այլ վերաիմաստավորել են: Այդպիսի վերաիմաստավորմանը ենթարկվեց մասնավորապես Մոյրայի առասպելական կերպարը, որի հետևանքով առաջացան կատեգորիաների երկու կարևորագույն զույգեր՝ ազատություն-անհրաժեշտությունը և պատճառ-հետևանքը: Այս կատեգորիաները համընդհանուր նշանակություն ունեն քանի որ նրանք կազմում են պատմականության սկզբունքի հիմքը: Ըստ այդմ, այս

կատեգորիաները պահպանում են իրենց նշանակությունը բոլոր ժամանակաշրջանների պատմական մտքի համար, ենթարկվելով անշուշտ բազմապիսի կերպափոխումների: Ատենախոսության հեղինակը փորձում է որոշել, թե ինչ զարգացում են ունեցել այս հասկացությունները վաղ բյուզանդական եկեղեցական և V դարի հայ պատմագրության մեջ: Եկեղեցական պատմիչների կարծիքով, բացարձակ ազատություն ունի միայն Աստված, մինչդեռ մարդու ազատությունը միշտ հարաբերական է և սահմանափակ: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ մարդու մեջ առկա է ոչ միայն ինքնագիտակցող հոգին, այլև ֆիզիկական մարմինը իրեն հատուկ զգայական մղումներով և կարիքներով: Վերջիններս անխուսափելիորեն սահմանափակում են, իսկ երբեմն առհասարակ վերացնում են մարդու ազատությունը նրա կոնկրետ կենսագործունեության մեջ: Բյուզանդական եկեղեցական պատմագրության մեջ էապես ձևափոխվել է նաև պատճառականության սկզբունքի ընկալումը: Մի կողմից, քրիստոնյա պատմիչները, իրենց անտիկ նախորդների նման նույնպես ձգտում էին ազատել պատմական իրականությունը ամեն տեսակի առասպելական ուժերի և էակների ազդեցությունից, քանի որ դա անհամատեղելի էր քրիստոնեական անձնապաշտության հետ: Սակայն մյուս կողմից Աստծո արարած հանդիսացող մարդը իր գործունեության մեջ չի կարող անկախ լինել Արարչից, որը բոլոր բնական և հասարակական գործընթացների նախապատճառն է: Եկեղեցական պատմագրության մեջ նրա իսկական ազատությունը միշտ սահմանափակ է լինում հոգու և մարմնի միջև եղած կապի պատճառով, քանի որ մարմինը, լինելով նյութական առարկա, ենթարկվում է բնական անհրաժեշտությանը, որի միջոցով դրսևորվում է անդրանցական Աստծո նախախնամությունը:

Անցնելով V դարի հայ դասական պատմագրությանը, հեղինակը նշում է, որ նրա բնույթը հնարավոր չէ հասկանալ այն լուսավորական շարժման շրջանակներից դուրս, որի հիմնադիրն էր Մեսրոպ Մաշտոցը: Թարգմանական գրականության անմիջական ազդեցության տակ ձևավորվող ազգային մատենագրությունը անշուշտ չէր կարող անտեսել բյուզանդական եկեղեցական պատմիչների փորձը, որոնք ստեղծել են նոր, քրիստոնեական պատմագրության դասական նմուշներ: Սակայն այս ազդեցությունը սահմանափակ բնույթ ուներ, և V դարի հայ պատմագրությունը, ընդհանուր առմամբ, աչքի է ընկնում անտարակուսելի ինքնատիպությամբ ու յուրօրինակությամբ: Դրա

հիմնական պատճառն այն էր, որ հելլենիստական մտածելակերպը IV-V դարերում շարունակում էր ազդեցություն գործել հայ հասարակության հոգևոր կյանքի վրա: Հայաստանի վաղ միջնադարյան մշակույթի նախորդ ժամանակաշրջանից ժառանգված հոգևոր նվաճումներից էր նաև պատմագրությունը: Հայտնի է, որ Արտաշեսյանների օրոք Հայաստանում ստեղծվում էին այսպես կոչված մեհենական պատմություններ, որոնց մեջ արձանագրվում էին կարևորագույն պատմական իրադարձությունները: Հայ դասական պատմագրությունը բնական շարունակությունն ու հետագա զարգացումն էր այն միտումների, որ ձևավորվել էին նախորդ պատմական փուլում: Հեղինակը համարում է, որ իր հոգևոր ակունքների նշված տարասեռության պատճառով V դարի հայ պատմագրությունը իրենից ներկայացնում էր բարդ, երբեմն հակասական երևույթ, որի մեջ միահյուսված էին պատմական իրականության իմաստավորման ինչպես քրիստոնեական, այնպես էլ հելլենիստական գաղափարներ ու մեթոդներ: Ընդորում, տարբեր հեղինակների մոտ առավել դրսևորված էր կամ քրիստոնեական, կամ հելլենիստական բաղադրիչը: Օրինակ, առաջին հայ պատմիչ Կորյունի գրչին պատկանող «Վարք Մաշտոցի» հռչակավոր երկը քրիստոնեական վարքագրության մի տիպիկ հուշարձան է: Դա ոչ թե սոսկ հայկական այբուբենի ստեղծողի մի կենսագրություն է, այլ հենց մի վարք, որի մեջ պատմվում է քրիստոնեական մեծ սրբի հոգևոր սխրանքի մասին:

Քրիստոնեական պատմական մտածելակերպը էլ ավելի վառ դրսևորում է ստացել Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ: Մի կողմից, նրա համար մարդկային կամքի, և ըստ այդմ հոգու ազատությունը ակներև փաստ է: Սակայն, անկախ դրանից, մարդը, հաճախ դառնալով իր մարմնի ստրուկը ու ենթարկվելով վերջինիս բիրտ կրքերին ու հակումներին, բազմապիսի մեղքեր և ոճիրներ է գործում: Պատմության մեջ դրսևորվող պատճառականության սկզբունքը ընկալելիս Ագաթանգեղոսը նույնպես կանգնած է ուղղափառ քրիստոնեական դիրքերի վրա: Նա կարծում է, որ պատմական պատճառահետևանքային շղթաներում դրսևորվում է Աստծո նախախնամական իմաստությունը, որ աշխարհում Տիրոջ կամքի հաղթանակի համար անհրաժեշտ պայմաններ է ստեղծում, իրադարձությունների ընթացքին տալով համապատասխան ուղղություն:

Անցնելով Եղիշեի ստեղծագործությանը, հեղինակը նշում

է, որ առաջին հայացքից «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» հռչակավոր երկը պատկանում է եկեղեցական պատմագրության ավանդույթին, քանզի նրա մեջ նկարագրվում է կրոնական պատերազմը հայերի և պարսիկների միջև: Սակայն ավելի խորացված քննության դեպքում ակնհայտ է դառնում այս տեսակետի միակողմանիությունը: Եղիշեի սույն երկը բնավ վարք չէ, իսկ Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները ոչ թե մարտիրոսներ են բառիս բուն իմաստով, այլ վասն հավատո և հայրենյաց ընկած քաջարի ռազմիկներ: Դրա հետ մեկտեղ հեղինակը նշում է, որ Եղիշեի ստաղծագործության մեջ կան դրվագներ, որոնք լիովին համակված են քրիստոնեական վարքագրության ոգով, և բացի այդ, մարդու բնության նրա ըմբռնումը հիմնված է քրիստոնեական մարդաբանության սկզբունքների վրա:

V դարի պատմիչներից հելլենիստական պատմագրության ավանդույթի առավել մեծ ազդեցություն է կրել Մովսես Խորենացին: Նա գրեթե չի հետաքրքրվել այն գաղափարներով, որ ընկած էին IV-V դարերում ձևավորվող բյուզանդական եկեղեցական պատմագրության հիմքում: Պատմական գործընթացի նախապատճառի և վերջնական նպատակի, մարդու ազատ կամքի և աստվածային շնորհի փոխհարաբերության, պատմական իրադարձությունների ընթացքի վրա աստվածային նախախնամության ազդեցության պրոբլեմները Խորենացու համար փաստորեն գտնվում են երկրորդ պլանի վրա: Եվ ընդհակառակը, անտիկ պատմական մտքից ժառանգված գաղափարական զինանոցը նա օգտագործել է ամբողջապես: Նրա «Հայոց պատմությունը» համակված է հետաքրքրությամբ ինչպես ամբողջ ազգի, այնպես էլ առանձին անհատների ճակատագրի հանդեպ: Այս երկը հիմնարար է և ամբողջական, այն գրված է որոշակի ծրագրի համաձայն, որի հիմքում են ընկած հեղինակի բարոյական և քաղաքական գաղափարները:

Ի տարբերություն Խորենացու և Եղիշեի, Ղազար Փարպեցու վրա մեծապես ազդել է յուրահատուկ քրիստոնեական մտածելակերպը: Օրինակ, գրելով Վարդանանց պատերազմի մասին Փարպեցին գրեթե ոչինչ չի գրում Վարդանանքի մասնակիցների սխրանքների հայրենասիրական շարժառիթների մասին, առավելագույն չափով ընդգծելով նրանց կրոնական ոգևորությունը և ջերմեռանդ քրիստոնեական հավատքը: Դա բնորոշ է ոչ միայն ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին, որի համար ամենից կարևորը իր կրոնական խղճի

մաքրությունն է, այլև ապստամբության շարքային մասնակիցներին: Նրանք ելան մարտի ոչ այնքան Հայրենիքի պաշտպանության համար, որքան հույս ունենալով արժանանալու մարտիրոսական պսակի: Սակայն այս փաստերը դեռ չեն վկայում Փարպեցու հայ պատմագրության եկեղեցական թևին պատկանելու մասին: Իր հերոսների այս կամ այն արարքը բացատրելիս, Փարպեցին երբեք չի վկայակոչում Աստծո նախախնամական կամքը: Նա հակված է մեծ նշանակություն տալու առանձին անհատների պատահական քմահաճույքներին և տրամադրություններին:

Խոսելով Փավստոս Բուզանդի մասին, հեղինակը համարում է, որ Բուզանդի պատմության մեջ քրիստոնեական մոտիվները շատ վառ են դրսևորված: Եթե Խորենացու մոտ նրանք, մեծ մասամբ, գրական ազդեցության հետևանք են, ապա Բուզանդի համար այս մոտիվները հարազատ են ու բնաբուխ, սկիզբ առնելով այն էպիկական սկզբնաղբյուրներից, որ ընկած են նրա «Պատմության» հիմքում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է պատմական գործընթացում ազատության և անհրաժեշտության հիմնախնդրին: Փիլիսոփայական մտքի պատմության մեջ այս հիմնախնդիրը միշտ գտնվում էր ուշադրության կենտրոնում, քանի որ այն սերտորեն կապված է մարդկային անձի խորհրդի հետ: Հեղինակը նշում է, որ այս հիմնախնդիրը վերլուծելիս, պետք է խուսափել անտեղի արդիականացումից: Ի տարբերություն հարցի ժամանակակից ըմբռնման, անտիկ շրջանում և միջնադարում անհատը չէր դիտվում որպես ինքնակա և ինքնաբավ մի սուբյեկտ, այլ համարվում էր որոշակի հասարակական ամբողջության մի մաս: Անհատը ենթարկվում էր այս ամբողջության մեջ իշխող բարոյական կարգերին և նորմերին: Անտիկ պատմության պոլիսային շրջանում այդ նորմերի անձնավորողներն ու պահպանողները հեթանոսական աստվածներն էին, որոնք այդ ժամանակ հիմնականում ստանձնել էին հնամենի ճակատագրի գործառույթները, սակայն, ի տարբերություն կույր և իռացիոնալ Մոյրաների, աստվածների կամքը և գործունեությունը բարոյական

և բանական բնույթ ուներ: Սակայն ճակատագրից և աստվածներից մարդու կախվածությունը բնավ չէր նշանակում, որ անտիկ աշխարհում մարդը համարվում էր բախտի ստրուկ, որը զուրկ էր ամեն տեսակի ազատությունից և անձնիշխանությունից: Նման կարծիքը խորապես սխալ և հակապատմական կլիներ, քանի որ այն ելնում է մարդու ազատության հետվերածնական ըմբռնումից: Անտիկ աշխարհն ուներ ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության իր սեփական, խորապես դիալեկտիկական ըմբռնում: Աստվածների կողմից անձնավորված բարոյականության համընդհանուր նորմերը խորթ չէին անհատական գիտակցությանը: Աստվածների մեջ մարմնավորված բարոյական օրենքը ոչ թե դրսից է պարտադրվում անհատին, որպես օտար և նրա ազատությունը սահմանափակող մի ուժ, այլ ընդհակառակն՝ նրա ինքնագիտակցության և ամբողջ հոգեկան կյանքի հիմքն էր կազմում: Ի ապացույց այս դրույթի, հեղինակը մի շարք օրինակներ է բերում անտիկ պատմագրությունից:

Անցնելով բյուզանդական պատմական նյութերի վերլուծությանը, հեղինակը նշում է, որ արդեն եկեղեցական պատմագրության ռահվիրա Եվսեբիոս Կեսարացին սկզբունքորեն այլ մոտեցում ուներ քննարկվող հիմնախնդրի նկատմամբ: Քրիստոնեական պատմագրությունը իր ձևավորման փուլում, անշուշտ, չէր կարող անտեսել անտիկ պատմական մտքի դարավոր փորձը, սակայն անհրաժեշտաբար պիտի ենթարկեր այն արմատական վերաիմաստավորման: Ինչպես արդեն նշվել է, հին հունական պատմագրության դասականները ընկալում էին մարդու ազատությունը որպես հոգու բնորոշ ներքին անհրաժեշտության արտաքին դրսևորումը: Եվսեբիոսը նույնպես համարում է, որ մարդու ակտիվության աղբյուրը հոգին է, սակայն վերջինիս ըմբռնումը նրա մոտ արդեն այլ է: Քրիստոնեական մարդաբանության համաձայն, մարդն արարված է ըստ Աստծո պատկերի և նմանության: Այս աստվածանմանությունը տեսնում էին, նախ և առաջ, նրա հոգու մեջ: Քրիստոնեական մտածելակերպի համար անընդունելի էր հոգու կախվածությունը իրեն հատուկ բնական հատկություններից: Հոգին գերբնական և աստվածանման մի էություն է, և քանի որ Աստված կամքի բացարձակ ազատություն ունի, ազատ է նաև հոգին: Կամքի ազատությունը Եվսեբիոսի համար աներկբայելի իրողություն է, ընդորում այն նրա համար անհամատեղելի էր որևէ բնական անհրաժեշտության հետ: Սակայն Եվսեբիոս Կեսարացու համար

կամքի ազատությունը և մարդու ազատությունը բնավ հոմանիշներ չեն: Նրա համար մարդը երկու տարբեր էությունների՝ հոգու և մարմնի հակասական միասնություն է, և մարմնի բնորոշ կրքերը և հակումները հաճախ խանգարում են մարդուն իրագործել իր կամքի ազատ ընտրությունը:
Պատմությունը Եվսեբիոսի համար այն ոլորտն է, որտեղ իշխում է աստվածային նախախնամությունը: Մարդու ազատության սահմանափակ բնույթը և նրա կախվածությունը Աստծո ամենազոր նախախնամական կամքից հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ամբարիշտ մարդկանց, և առաջին հերթին, քրիստոնեության բազմաթիվ թշնամիներին և հալածողներին: Ի հաստատումն ասվածի, հեղինակը մի շարք օրինակներ է բերում Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ից:

Հեղինակն ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ վաղ բյուզանդական եկեղեցական պատմագրությունը գաղափարական առումով միատեսակ և միասնական երևույթ չէր: Եթե համեմատենք Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն»-ը V դարում ապրած Սոկրատ Սքոլաստիկոսի նույնանուն երկի հետ, ապա հեշտությամբ կնկատենք նրանց միջև եղած էական տարբերությունները: Ի տարբերություն Եվսեբիոսի, Սոկրատին, ընդհանուր առմամբ, բնորոշ չէ քրիստոնեական մտածելակերպը: Թեև նա, անշուշտ, հավատացյալ քրիստոնյա էր, սակայն նրա «Պատմությունը» պատկանում է վաղ բյուզանդական պատմագրության եկեղեցական թևին հիմնականում իր թեմատիկայի պատճառով: Պատմական գործընթացում ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության քրիստոնեական ըմբռնումը համապատասխան դրսևորում չի ստացել: Իր սիրած պատմիչ Թուկիդիդեսի նման նա համարում է, որ մարդու պատմական ազատությունը տվյալ անհատի խառնվածքի բնածին էությունից բխող անհրաժեշտության դրսևորումն է: Ինչպես հին հունական պատմիչների երկերում, Սոկրատի «Պատմության» մեջ գործող անձանց մեծամասնության բնավորությունները որևէ փոփոխություն չեն կրում ու չեն զարգանում:

Այլ պատկեր ենք տեսնում այդպես կոչված «Փոքր Սոկրատում»: Դա VII դարի վերջին - VIII դարի սկզբին ապրած Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» համառոտ և վերամշակված հայերեն թարգմանությունն է: Այն սկզբից մինչև վերջ համակված է ուղղափառ քրիստոնեական ոգով: Այս դրույթը

ապացուցելու համար հեղինակը մի շարք օրինակներ է բերում: Անդրադառնալով վաղ բյուզանդական եկեղեցական պատմագրության երրորդ դասական Սոզոմենոսի ստեղծագործությանը, նա նշում է, որ Սոզոմենոսի և Սոկրատ Սքոլաստիկոսի միջև մեծ ընդհանրություն կա: Պատմականության սկզբունքի նրանց ըմբռնումը նույնն է:

Անցնելով V դարի հայ դասական պատմիչների հայացքների վերլուծմանը, հեղինակը մատնանշում է հետաքրքիր մի երևույթ: V դարի սկզբին, երբ ստեղծվել էին հայոց գրերը, քրիստոնեությունը Հայաստանում արդեն ամբողջ մի դար պաշտոնական գաղափարախոսություն էր: Սակայն անվիճելի փաստ է, որ V դարի հայ պատմիչների մեծ մասը, խորապես հավատացյալ քրիստոնյաներ լինելով հանդերձ, իրենց երկերում բնավ չէին արտահայտում եկեղեցական պատմահայեցողությունը: Ընդհանրապես, քրիստոնեական պատմափիլիսոփայությունը V դարի հայ պատմիչների վրա մեծ ազդեցություն չէր գործել: Պատմական գործընթացում ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության ուղղափառ-քրիստոնեական ըմբռնումը բնորոշ էր, մեծ մասամբ, այդպիսի պատմիչ-վարքագիրներին, ինչպիսին էին Կորյունը և Ագաթանգեղոսը: Մյուս պատմիչների երկերում պատկերը խիստ անմիատարր է: Նրանց ստեղծագործություններում այս կատեգորիաների բուն քրիստոնեական ըմբռնումը բարդ և յուրովի միահյուսվում է նախաքրիստոնեական հայացքների հետ: Այստեղ հարց է ծագում՝ ո՞րն է պատմական մտքի հելլենիստական ձևերի նման կենսունակության պատճառը:

Այս հարցին պատասխանելու համար պետք է հիշել, որ V դարում հայ հելլենիստական մշակույթի ավանդույթները դեռ բավականին ուժեղ էին, և կարող էին զգալի ազդեցություն գործել ազգային պատմագրության վրա: Թեև V դարի հայ պատմիչները պատկանում էին հոգևոր դասին, սակայն այնպիսի հսկաներ, ինչպիսին էին Խորենացին ու Բուզանդը, ամենևին նեղ եկեղեցական մտածելակերպի արտահայտողներ չէին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ այս երկու պատմիչները, ազգն ընկալում էին որպես միասնական ամբողջություն և մի մեծ ընտանիք: Օրինակ, Խորենացին հայ ժողովրդի պատմության նախնական շրջանը դիտում է որպես մեկ մարդու՝ Հայկ նահապետի գերդաստանի պատմություն:

Այս տեսակետի պատճառը պետք է որոնել նախաավատատիրական Հայաստանի սոցիալ-տնտեսական

իրողություններում: Հայտնի է, որ ավատատիրական շրջանի Արշակունյաց Հայաստանի ամբողջ հասարակական կենցաղը համակված էր նախորդ դարաշրջանից ժառանգված համայնատոհմական սկզբունքներով: Հայաստանում III-V դարերում դեռ առկա էին համայնական հողօգտագործումը և ազատ շինականների դասը: Հայ գյուղական համայնքը կազմված էր մի քանի տոհմերից, որոնք արյունակցական կապեր ունեին միմյանց հետ: Համայնքը գլխավորվում էր ամենահեղինակավոր տոհմավագի կողմից, որի իշխանությունը նահապետական բնույթ ուներ: Հետագայում մասամբ այս տոհմավագներից էր կազմվել ավատատիրական շրջանի ազնվազարմ դասը: Պատահական չէ, որ գրաբարում «նահապետ» և «նախարար» բառերը հոմանիշներ են: Նման մոտեցման դեպքում ժողովուրդը դիտվում էր որպես մի մեծ ընտանիք, իսկ թագավորը, որը բոլոր նախարարների գլխավորն էր, որոշ առումով կարող էր համարվել իր հպատակների հայրը:

Խորենացին քաջ գիտակցում էր բոլոր հայերի որպես մի ազգային ընտանիքի անդամների արմատական շահերի համընկնումը: Դա անմիջականորեն վերաբերում է նաև մարդկանց պատմական գործունեության մեջ ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության հիմնախնդրին: Խորենացու կամ Բուզանդի նման պատմիչների համար բնորոշ է այն կարծիքը, որ առանձին անհատը, թեկուզ նա լինի թագավոր կամ նախարար, կարող էր համարվել խոշոր պատմական գործիչ լոկ այն դեպքում, եթե նա կրում և արտահայտում էր էթնոսի ընդհանրական ինքնագիտակցությունը: Այս կարգի պատմական հերոսների համար իրենց սեփական անձի գիտակցումը անբաժանելի է այս ազգին պատկանող բոլոր անհատների մեջ առկա համընդհանուր էթնիկական ինքնագիտակցությունից: Յուրաքանչյուր էպոսի գլխավոր գործող անձը միշտ լինում է մի հերոս, քաջարի մի դյուցազն, որը մաքառում է հանուն իր ժողովրդի շահերի: Այս պատմական գործիչների կամքը համընկնում է իր էթնոսի հավաքական կամքի հետ, լինելով համաշխարհային պատմական անհրաժեշտության դրսևորումը: Նման պատմական գործչին պետք է համարել ազատ, քանի որ պատմական անհրաժեշտությունը նրա համար ստրկացնող արտաքին ուժ չէ, որ գործում է նրա կամքին հակառակ:

Ի հաստատումն ասվածի, հեղինակը սկզբնաղբյուրներից մի շարք օրինակներ է բերում, որոնցից պարզ է դառնում հարցի որոշ իմաստով ռոմանտիկ ըմբռնման առկայությունը V դարի հայ

պատմագրության մեջ: Սակայն հեղինակը, բերելով համապատասխան վկայություններ, նշում է, որ մասնավորապես Խորենացու մոտ կարելի է գտնել նաև այս հիմնախնդրի ուղղափառ քրիստոնեական ըմբռնման տարրեր: Ի տարբերություն Խորենացու, Փավստոս Բուզանդի կողմից նկարագրված պատմական գործիչները մեծ մասամբ ազատ մարդիկ չեն: Որպես կանոն, նրանք կործանվում են իրենց անձնական կամքը պատմական գործընթացի օբյեկտիվ տրամաբանությանը հակադրելու պատճառով: Դա վերաբերվում է Բուզանդի «Պատմության» և դրական, և բացասական գործող անձանց, օրինակ, Ներսես Մեծ կաթողիկոսին և Արշակ II թագավորին: Թեև Բուզանդը չի թաքցնում իր հիացմունքը, պատմելով Ներսես Մեծի մարդասիրական և բարեգործական միջոցառումների մասին, սակայն նրա կողմից նկարագրված պատմական անցքերի ներքին տրամաբանությունը վկայում է, որ Ներսես Մեծի քաղաքականությունը, հակասելով իր դարաշրջանին բնորոշ բարոյական ու քաղաքական միտումներին, դատապարտված էր ձախողման:

Անցնելով Եղիշեի ստեղծագործության վերլուծությանը, հեղինակն իր անհամաձայնությունն է հայտնում այն ավանդական տեսակետի հետ, որի համաձայն Վարդանանց պատերազմի հիմնական պատճառը հայերի դժգոհությունն էր պարսից արքունիքի բռնապետական և կեղեքիչ քաղաքականությունից: Այն հակասում է Եղիշեի աներկմիտ պնդմանը, որի համաձայն ոչ նախարարները, ոչ էլ շինականները, չնայած պարսիկների բոլոր բռնություններին և ծաղրանքներին, բնավ չէին մտածում ապստամբության մասին, մինչև որ Հայաստան չհասավ հազարապետ Միհրներսեհի կողմից գրված և հավատափոխության առաջարկ պարունակող նամակը: Եղիշեն համոզված է, որ Հայոց պատերազմի իսկական պատճառը պարսիկների ոտնձգություններն էին հայերի հավատի նկատմամբ: Հեղինակի կարծիքով, Եղիշեի այս համոզմունքը միանգամայն ճիշտ է, քանի որ նրա օրոգ քրիստոնեությունը Հայաստանում ոչ միայն կրոն էր: Այն խորհրդանշում էր ազգային պատկանելիությունը և ընկալվում էր որպես ազգի հոգևոր-բարոյական ինքնորոշման հիմք: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ Հայոց պատերազմի ներքին պատմական իմաստը կայանում էր հայ եկեղեցու և դավանանքի պահպանման մեջ, որովհետև միայն Հայաստանում էր պահպանվել նախնական, չաղավաղված քրիստոնեական վարդապետությունը: Եվ քանի որ

սպարապետ Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները իրենց գործունեությամբ նպաստում էին այս կարևոր պատմական նպատակին հասնելու, նրանք կարող են ազատ պատմական գործիչներ համարվել:

Ինչ վերաբերվում է V դարի վերջին հայ դասական պատմիչ Ղազար Փարպեցուն, ապա հեղինակը համարում է, որ նա, ընդհանուր առմամբ, ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության հիմնախնդիրը ըմբռնում էր այդպես, ինչպես դա անում էր Եղիշեն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Երրորդ գլխի սկզբում հեղինակը նշում է, որ պատճառականության էությունը փիլիսոփայական կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է, քանի որ այն ընկած է գիտական մտածողության հիմքում: Պատճառականության սկզբունքը չափազանց կարևոր է նաև պատմագիտության համար, որի ռահվիրաները հիմնվում էին անտիկ փիլիսոփայական մտքի նվաճումների վրա: Հաշվի առնելով այս հանգամանքը, հեղինակը համառոտակի բնութագրում է անտիկ իմաստասերների կարծիքները պատճառականության սկզբունքի էության մասին: Թեև այս տեսությունները հիմնականում բնափիլիսոփայական ուղղվածություն ունեին, սակայն դրա հետ մեկտեղ նրանք ունեին նաև պատմական կտրվածք, քանի որ անտիկ մտածողությունը հստակորեն չէր զատորոշում բնական և հասարակական զարգացման օրինաչափությունները: Վերջիններս արտացոլող կատեգորիաների թվին էին պատկանում, օրինակ, չափը (մոյրան), հակասությունների միասնությունն ու պայքարը, ինչպես նաև բախտը (տյուքեն): Բերվում են վկայություններ հին հունական պատմիչների երկերից, որոնք ցույց են տալիս այս գաղափարների կարևորությունը անտիկ պատմագրության համար:

Բոլորովին այլ պատկեր են ներկայացնում վաղ բյուզանդական պատմագրական նյութերը: Քրիստոնեական արաչապաշտությունն և անձնապաշտությունը սկզբունքորեն անհամատեղելի են պատմական գործընթացում պատճառական կապերի բնապաշտական ըմբռնման հետ: Քրիստոնեությունը չէր ընդունում պատմության մեջ գործող և Արաչից անկախ

պատճառականության գոյությունը: Քրիստոնյա մտածողները համարում էին, որ պատմության մեջ դիտվող պատճառահետևանքային կապերը հնարավոր չէ բացառել, ելնելով մարդու զգայարանների և բանականության համար մատչելի էմպիրիկ գործոնների ազդեցությունից: Պատմական անհրաժեշտության միջոցով դրսևորվող Տիրոջ ամենազոր կամքը ոչ թե ներակա է պատմիչի կողմից դիտվող իրականությանը, այլ նրա վրա դրսից է ներգործում: Բոլոր այն որակական բնորոշումներն ու հատկությունները, որոնք անտիկ շրջանում բոլոր իրերի և երևույթների անկապտելի բնութագրումներն էին համարվում, այժմ սկսեցին դիտվել որպես աստվածային արարչական ակտի հետևանքներ: Եվ քանի որ մարդու մարմինը և հոգին նույնպես ստեղծել է Աստված, նրանք էլ, ինչպես հավատում էին քրիստոնյաները, գտնվում էին Աստծո նախախնամական կամքի ազդեցության ներքո: Սակայն պատմական գործընթացի կախումը նախախնամությունից բնավ չէր նշանակում, որ մարդկային կամքը չէր դիտվում որպես պատմական իրադարձությունների էական պատճառ: Մարդն իր կամքով է դառնում այս կամ այն իրադարձության պատճառ, սակայն նրա կամքն արարված է Աստծո կողմից, և ազատ է ոչ թե իր բնությամբ, այլ լոկ այն բանի շնորհիվ, որ դա էր պահանջում աստվածային բանականության համապատասխան գաղափարի մեջ պարունակող մտահղացումը նրա մասին: Աստվածային բանականությունը անբաժանելի էր Աստծո նախախնամությունից: Գերագույն գոյացության կարևորագույն ատրիբուտներից մեկը նրա բացարձակ ազատությունն է, որի շնորհիվ նա դառնում է բոլոր զգայական իրերի, երևույթների և իրադարձությունների գոյության և լինելիության ձևական, շարժող և նպատակային պատճառը: Մարդը նույնպես հաղորդակից է այս աստվածային սկզբնապատճառին, քանի որ նա օժտված է ոգեկան մտքով (հուն. **nous**), որը մարդկային հոգու աստվածային մասն է: Այն միանգամայն ազատ է, բայց մարդը, որպես մարմնական էակ, երբեք չի լինում իր արարքների պատճառը, քանզի նրա ֆիզիկական մարմինը, ինչպես նաև առհասարակ բոլոր նյութական մարմինները, կախված է այլ նյութական իրերից ու երևույթներից: Կոնկրետ պատմական գործունեության մեջ մարդկանց գործողությունները սովորաբար բխում են իրենցից անկախ պատճառներից, որոնց միջոցով դրսևորվում է Աստծո նախախնամական կամքը: Հեղինակն այս դրույթն ապացուցող մի շարք վկայություններ է բերում բյուզանդական պատմիչների

երկերից:

Անցնելով համապատասխան հայկական պատմագրական նյութերի վերլուծությանը, հեղինակը նշում է, որ այստեղ եղած պատմական իրադարձությունների միջև առկա պատճառահետևանքային կապերի ըմբռնումը շատ յուրօրինակ է, և չունի ոչ անտիկ, ոչ էլ բյուզանդական զուգահեռներ: Օրինակ, Փավստոս Բուզանդի մոտ փաստորեն չկա ներգործող պատճառականության գաղափարը, որի համաձայն յուրաքանչյուր պատմական իրադարձություն օրինաչափորեն տեղի է ունենում մեկ այլ իրադարձության ազդեցության հետևանքով: Նման մոտեցման դեպքում չի կարելի համարել որ տարբեր իրադարձությունների միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ: Նրանք միայն նախորդում են իրար ժամանակի մեջ: Բերելով համապատասխան վկայություններ Բուզանդի «Հայոց պատմությունից», հեղինակը նշում է, որ թեև այն, անկասկած, չափազանց արժեքավոր պատմական սկզբնաղբյուր է, սակայն չի կարող համարվել գիտական պատմագրության տիպար, քանի որ պատմական իրականության իմաստավորման Բուզանդի օգտագործած մեթոդի հիմքում ընկած է ոչ այնքան բանականությունը, որքան ինտուիցիան: Բուզանդը չէր ձգտում ճանաչել օբյեկտիվ պատճառական կապերի միջոցով դրսևորվող պատմական օրինաչափությունները, բայց դրա փոխարեն նա բացառիկ կարողություն ուներ ներըմբռնողաբար թափանցելու նկարագրվող իրադարձությունների բարոյական իմաստի մեջ:

Պատճառահետևանքային կապերի դրսևորումը Մովսես Խորենացու Պատմության մեջ նույնպես ունի իր յուրահատկությունները: Խորենացու երկը մեկ կուռ պատմական կոնցեպցիայի արտահայտություն է: Բոլոր գործընթացները այստեղ անընդմեջ շարունակական են, ունեն շեշտված սկիզբ, զարգացում և ավարտ: Նրանք, միևնույն ժամանակ, միահյուսված են և փոխպայմանավորված: Գործընթացների հաջորդական դրվագները կարող են տեղի իմաստով իրարից անջատված լինել, բայց նրանք միշտ ներքնապես փոխկապակցված են, մեկն անհրաժեշտորեն բխում է մյուսից և բնականորեն հանգեցնում հաջորդին: Կարելի է ասել, որ սա պատմական պատճառահետևանքային կապերի արտահայտման կատարյալ ձև է:

Միանգամայն այլ կերպ էր ըմբռնում պատճառականության սկզբունքի դրսևորումը Եղիշեն: Նրա «Վասն Վարդանայ եւ հայոց

պատերազմի» հռչակավոր երկը մի պատում է, որի մեջ պատճառա-հետևանքային կապը տարբեր դրվագների միջև պահպանվում է սկզբից մինչև վերջ: Դրա հետևանքով այս պատմությունը դառնում է միասնական և օրգանական ամբողջություն, որի բոլոր մասերը փոխկապակցված են, և չեն կարող հասկացվել իրարից անկախ: Իր մեթոդի այս առանձնահատկության շնորհիվ Եղիշեն կարող է համարվել հայ պատմագիտության ռահվիրաներից մեկը: Մեծապես օժտված լինելով կրոնական պաթոսով և գեղարվեստական տաղանդով, նա նախ և առաջ գիտնական պատմիչ է:

V դարի վերջին հայ պատմիչ Ղազար Փարպեցու պատմության մեջ պատճառականության ըմբռնումը շատ մոտ է Եղիշեի ըմբռնմանը: Սակայն կան նաև էական տարբերություններ: Թեև Եղիշեն խորապես հավատացյալ քրիստոնյա էր, սակայն նա, կոնկրետ պատմական իրադարձությունների պատճառները բացատրելիս, սակավադեպ է վկայակոչում աստվածային նախախնամությունը: Ի տարբերություն Եղիշեի, Փարպեցին հակված է պատմական իրադարձությունները բացատրել Աստծո կամքի անմիջական միջամտությամբ:

Գրելով հայ եկեղեցական պատմագրության ամենանշանավոր ներկայացուցիչներ Կորյունի և Ագաթանգեղոսի մասին, հեղինակը նշում է, որ նրանք, որպես կանոն, պատմական անձանց արարքները և պատմության ճակատագրական իրադարձությունները բխեցնում են աստվածային կամքի և շնորհի անմիջական ներգործությունից:

Ամփոփման մեջ ի մի են բերված հետազոտության արդյունքները և շարադրված են եզրակացությունները:

Ատենախոսության թեմայով հրապարակված են հետևյալ աշխատությունները

1. Պատմականության սկզբունքի ներքին կառուցվածքը, «Իրան-Նամէ» 1997, N2-3 (N24-25), էջ27-29:
2. Պատմական անձնավորությունների գործունեության ազատության նախադրյալները ըստ V դարի հայ պատմիչների: // Երիտասարդ արևելագետների հանրապետական XIV գիտական նստաշրջան (զեկուցման թեզեր), Երևան, 1988, էջ11-12:
3. Ազատության և անհրաժեշտության փոխհարաբերության խնդիրը Եվսեբիոս պատմական երկերում: // Երիտասարդ արևելագետների հանրապետական XV գիտական նստաշրջան (զեկուցման թեզեր), Երևան, 1989, էջ5-6:
4. Պատճառա-հետևանքային կապերը պատմական գործընթացում (ըստ V դարի հայ պատմիչների): // Երիտասարդ արևելագետների հանրապետական XVIII գիտական նստաշրջան (զեկուցման թեզեր), Երևան, 1997, էջ21-22:

Матвосян Артур Корюнович

ПРОБЛЕМА ВЗАИМООТНОШЕНИЯ РАННЕВИЗАНТИЙСКОЙ ЦЕРКОВНОЙ ИСТОРИОГРАФИИ И АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ V ВЕКА

(понимание истории и историзма)

(Резюме)

Данная диссертация посвящена проблеме взаимоотношения ранневизантийской церковной историографии и армянской историографии V века в аспекте понимания истории и историзма. Эта тема до того не становилась предметом отдельного монографического исследования. В центре внимания армянских и зарубежных исследователей находились проблемы, связанные, главным образом, с уточнением времени жизни армянских историков

раннего средневековья, с установлением правильной датировки историографических памятников, с выявлением использовавшихся историками первоисточников, с определением степени достоверности их свидетельств и т.п. Диссертация состоит из Введения, трех глав, Заключения и списка литературы.

Во Введении отражены цель, задачи, новизна и практическая значимость данного исследования, освещена история изучения проблемы в арменоведческой литературе.

Первая глава посвящена исследованию категориальной структуры принципа историзма. Подчеркивается важность разрушения мифологической картины мира для возникновения научного мышления вообще и научной историографии в частности.

Вторая глава посвящена рассмотрению проблемы взаимоотношения свободы и необходимости в историческом процессе. Показывается разнообразие точек зрения различных византийских и армянских историков на эту проблему.

Третья глава посвящена принципу причинности и его проявлению в историческом процессе. Делается обзор точек зрения античных философов на проблему причинности, и рассматриваются различные модификации этого принципа на почве ранневизантийской церковной историографии и армянской историографии V века.

В Заключении подведены итоги исследования, и подчеркнуто неповторимое своеобразие понимания принципа историзма в армянской классической историографии V века.

Arthur Matevosyan
The problem of interrelation of the early byzantine church historiography and
armenian historiography of the V century
(The conception of history and historical method)
/Summary/